

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/7**

ք. Երևան

22.09.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի թիվ 91 դպրոցի վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 2017 թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում կատարվող աշխատանքների համար կատարման վերջնաժամկետ է սահմանվում 20.11.2017 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե Աշխատանքի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սույն պայմանագրի N 4.2 Հավելվածով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրմաս համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուս պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:



5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետը վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 189643200 (հարյուր ութսունինը միլիոն վեց հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր, այսուհետև՝ պայմանագրի ընդհանուր գումար) ՀՀ դրամ, որից՝ 31607200 (երեսունմեկ միլիոն վեց հարյուր յոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 30762300 (երեսուն միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), որից՝ 5127050 (հինգ միլիոն հարյուր քսանյոթ հազար հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.1.2 Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով՝ վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով՝ անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է՝ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 4.2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի Ր ա տ ու՝

«Հառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե»
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
«Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն»
Հ/Կ 900011011906
ՀՎՀՀ 02565827

Կ ա պ ա լ ա ռ ու՝


«ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր-Նորքի
9-րդ զանգված, 20/53
«Հայթիզնեսթանկ» ՓԲԸ
Հ/Կ 11500007570000

Աշխատակազմի



իրության
Կ.Տ.

Տնօրեն՝



Կ.Տ.

**ՀՀ ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ԹԻՎ 91 ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
ՆԱԽԱՀԱՇԻՎ-ԾԱՎԱԼԱԹԵՐԹ**

h/h	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի ընդհանուր արժեքը /հազ.դրամ/	Ընդհանուր արժեքը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6	7
Համաշինարարական աշխատանքներ						
		<i>Քանոցման աշխատանքներ</i>				
1	P23-164	Փայտե մանրահատակի քանդում	մ2	1009.900	0.539	544.702
2	P23-166	Հատակի կերամիկական սալիկների քանդում	մ2	395.500	0.423	167.352
3	P 14-363 k=0,6	Յուղաներկի մաքրում պատերից	մ2	368.000	0.340	124.938
4	P 11-80	Պատերի մաքրում լատեքսային ներկից	մ2	883.300	0.274	241.795
5	P 11-225	Պատերից գաջե սվաղի քանդում	մ2	884.000	0.763	674.106
6	P 11-229	Գաջի սվաղի քանդում առաստաղներից	մ2	1700.000	0.997	1695.236
7	23-151	Միջնորմների քանդում	մ2	29.000	0.600	17.409
	46-79	Պատուհանի տակի շարվածքի քանդում, 40 սմ հաստությամբ տուֆե պատ	մ3	1.600	5.331	8.529
8	P 11-80	Առաստաղի մաքրում լատեքսային ներկից	մ2	365.000	0.274	99.915
9	23-157	Ցինկապատ թիթեղից տանիքի ծածկույթի քանդում	մ2	1086.000	0.070	76.463
10	P 10-70 k=0,8	Տանիքի փայտանյութի ապամոնտաժում	մ3	28.320	24.250	686.749
11	P 23-174	Փայտե դռան քանդում	100մ2	0.900	115.842	104.258
12	E 46-122 կիրառել	Մետաղապլաստե պատուհանի քանդում	մ2	459.000	1.980	908.655
13	P23-161	Շլակաբետոնե նախաշերտի քանդում ճեղքերում	մ3	21.600	11.633	251.281
14	P23-161	Շլակաբետոնե նախաշերտի քանդում ծածկի վրայից	մ3	85.700	11.633	996.982
15	8-191	Դրսի կավարամածի պատրաստում և հանում	մ2	1583.300	1.114	1764.303
16	8-191	Դրսի կավարամածի պատրաստում և հանում առանց նյութի օգտագործման	մ2	566.700	0.867	491.070
		<i>Կոնստրուկտորական մաս</i>				
		<i>Հեծանների ուժեղացում</i>				
27	E6-161 15-2	Ե/բ միաձույլ հեծանների ուժեղացում B25 դասի բետոնից ՇՕ-1, 10 հատ	մ ³	7.700	79.513	612.253
28	ԻՆՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	0.000	262.621	0.000
29	ԻՆՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	0.000	268.912	0.000

33	E6-161 15-2	Ե/բ միաձույլ հեծանների ուժեղացում B25 դասի բետոնից ՀՄ-3, 2հատ	մ ³	1.300	79.513	103.367
34	ԻնՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	0.000	262.621	0.000
35	ԻնՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	0.000	268.912	0.000
		<i>Պատերի ուժեղացում</i>				
36	46-52 19-2	Անցքերի շաղափում պատերում 300մմ, D-12մմ	հատ	673.400	0.879	591.852
37	46-52 19-2	Անցքերի ծածկում պոլիմերային ցեմենտի լուծույթով	մ ³	0.060	135.556	8.133
38	E6-247 29.-2	Պատերի ուժեղացում տորկրետ B25 դասի բետոնով 150մմ հաստ., 300մմ2, 2հատ	մ ²	352.040	9.216	3244.263
39	6-369	Ցանցի իրականացում 10A500C	տ	3.126	321.113	1003.800
40	ԻնՖ.տեղ.	Խարիսխ 10A500C	տ	0.240	267.339	64.161
41	46-52 19-2	Անցքերի բացում պատերում 300մմ, D-12մմ	հատ	372.000	0.879	326.951
43	E6-247 29.-2	Ա/վ պատերի ուժեղացում տորկրետ B25 դասի բետոնով 10 և 16 առանցքներում, 50մմ հաստ., 70.84մմ2, 2 հատ	մ ²	94.500	4.978	470.454
44	6-369	Ցանցի իրականացում 10A500C	տ	0.800	321.113	256.891
45	ԻնՖ.տեղ.	Խարիսխ 10A500C	տ	0.100	267.339	26.734
46	E6-145 14-3	Դեֆորմացիաների ուժեղացում տորկրետ B25 դասի բետոնով 50մմ հաստ., 91.08մմ2- 4հատ	մ ³	10.900	87.781	1599.027
47	6-369	Ցանցի իրականացում 10A500C	տ	1.700	321.113	545.892
48	ԻնՖ.տեղ.	Խարիսխ 10A500C	տ	0.100	267.339	26.734
49	46-52 19-2	Անցքերի բացում պատերում 300մմ, D-12մմ	հատ	586.700	0.879	515.651
		<i>Սյուների ուժեղացում</i>				
52	P 23-146	Սյան շուրջը բետոնի շերտի քանդում	մ ³	8.300	18.016	149.534
53	P 23-146 կիրարկ	Սյան և պատի միջև զաջի շերտի քանդում	մ ³	6.400	18.016	115.303
54	E6-110	Ե/բ միաձույլ սյուների ուժեղացում ըստ 6-6 կտրվածքի պատրաստում B25 դասի բետոնից	մ ³	55.960	77.987	4364.180
55	ԻնՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	5.640	262.621	1481.184
56	ԻնՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	2.134	268.912	573.858
57	46-52 19-2	Անցքերի բացում պատերում 300մմ, D-12մմ	հատ	137.000	0.879	120.409
59	E6-110	Ե/բ միաձույլ սյուների ուժեղացում ըստ 6-6 կտրվածքի պատրաստում B25 դասի բետոնից	մ ³	0.000	77.987	0.000
60	ԻնՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	0.000	262.621	0.000
61	ԻնՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	0.004	268.912	1.076
62	E6-110	Ե/բ միաձույլ սյուների ուժեղացում ըստ 3-3 կտրվածքի պատրաստում B25 դասի բետոնից, 8հատ	մ ³	6.600	77.987	514.717
63	ԻնՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	1.300	262.621	341.408
64	ԻնՖ.տեղ.	Ամրան 10A500C	տ	0.000	267.339	0.000
65	ԻնՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	0.300	268.912	80.674
		<i>Սյուների ուժեղացում ըստ 14-Ե առանցքի h=3.3 մ 1հատ</i>				

52	P 23-146	Սյան շուրջը բետոնի շերտի քանդում	մ ³	0.200	18.016	3.603
54	E6-110	Ե/բ միաձույլ սյուների ուժեղացում ըստ 6-6 կտրվածքի պատրաստում B25 դասի բետոնից	մ ³	0.240	77.987	18.717
55	ԻնՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	0.000	262.621	0.000
56	ԻնՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	0.000	268.912	0.000
		<i>Սյուների ուժեղացում ըստ 8 և 18 առանցքների h=9.9 մ 2 հատ</i>				
51	P 11-225	Սյան վրային գաջի սվաղի քանդում	մ ²	12.000	0.763	9.151
52	P 23-146	Սյան շուրջը բետոնի շերտի քանդում	մ ³	1.440	18.016	25.943
54	E6-110	Ե/բ միաձույլ սյուների ուժեղացում ըստ 6-6 կտրվածքի պատրաստում B25 դասի բետոնից	մ ³	3.360	77.987	262.038
55	ԻնՖ.տեղ.	Ամրան 22A500C	տ	0.185	262.621	48.585
56	ԻնՖ.տեղ.	Ամրան 8AC1	տ	0.064	268.912	17.157
		<i>Ճածկի սալերի ուժեղացում</i>				
83	26-82 կիրարկ	Անցքերի բետոն B20 դասի բետոնից	մ ³	9.750	43.404	423.193
84	26-82 կիրարկ	Հարթ կարկասի բետոն B25 դասի բետոնից	մ ³	21.600	51.528	1113.006
85	E6-173	Ե/բ միաձույլ ծածկի սալերի ուժեղացում B25 դասի բետոնից 6.60 միշում	մ ³	70.650	65.292	4612.909
86	ԻնՖ.տեղ.	Ցանց 8AC-1	տ	4.859	268.912	1306.509
87	ԻնՖ.տեղ.	Պետյա 8AC-1	տ	0.233	268.912	62.772
88	ԻնՖ.տեղ.	Հարթ կարկաս 12A500C-1	տ	1.600	262.621	420.283
89	ԻնՖ.տեղ.	Պողպատե ձող 12A500C-1	տ	0.350	262.621	91.865
90	26-82 կիրարկ	Անցքերի բետոն B20 դասի բետոնից	մ ³	9.750	43.404	423.193
91	26-82 կիրարկ	Հարթ կարկասի բետոն B25 դասի բետոնից	մ ³	21.600	51.528	1113.006
92	E6-173	Ե/բ միաձույլ ծածկի սալերի ուժեղացում B25 դասի բետոնից 9.90 միշում	մ ³	54.650	65.292	3568.231
93	ԻնՖ.տեղ.	Ցանց 8AC-1	տ	4.859	268.912	1306.509
94	ԻնՖ.տեղ.	Պետյա 8AC-1	տ	0.233	268.912	62.772
95	ԻնՖ.տեղ.	Հարթ կարկաս 12A500C-1	տ	1.600	262.621	420.283
96	ԻնՖ.տեղ.	Պողպատե ձող 12A500C-1	տ	0.350	262.621	91.865
97	26-82 կիրարկ	Անցքերի բետոն B20 դասի բետոնից	մ ³	9.750	43.404	423.193
98	26-82 կիրարկ	Հարթ կարկասի բետոն B25 դասի բետոնից	մ ³	21.600	51.528	1113.006
		<i>Տանիք</i>				
99	11-6	Խարամի շերտի իրականացում 15 սմ հաստ.	մ ³	162.900	7.650	1246.117
100	8-291 8-292	Գոլշամեկուսիչ 2 շերտ ռուբերոիդ	մ ²	1086.000	5.176	5620.777
101	10-70,	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների իրականացում	մ ³	28.320	206.110	5837.043
102	P 23-213	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ ³	28.320	18.518	524.423
103	P 23-214	Կավարամածի հակահրդեհային պաշտպանում	100մ ²	10.900	59.787	651.682

104	12-404 1	Պրոֆիլավոր ցինկապատ 0,55մմ թիթեղից տանիքի ծածկույթի պատրաստում կավաբամաձի հետ /13.04մ3/	մ2	1086.000	6.198	6731.496
105	P 8-277	Տանիքի հորիզոնական ջրհորդանների կառուցում հարթ 0,55 մմ ցինկապատ թիթեղից b=1,2մ	մ	172.400	1.557	268.358
106	Իմֆ.տեղ	Հարթ ցինկապատ թիթեղի արժեքը 0,55 մմ հաստ.	մ2	206.880	2.171	449.042
107	12-404 1	Ցինկապատ 0,55մմ հաստ. ցինկապատ թիթեղից ծածկույթի պատրաստում 99,4մ	մ2	99.400	5.822	578.713
108	P 8-279	Ենդովա ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.	մ2	6.480	3.119	20.209
109	8-191	Տանիքի ջրահեռացման խողովակների տեղադրում h=13.0մ	կ-տ	6.000	56.616	339.693
110	Իմֆ.տեղ	Չազար	հատ	4.000	2.721	10.883
111	Գնաց	Մետաղապլաստե ձայնային պատուհանի տեղադրում ապակեփաթեթով 4+4մմ տեղադրում	մ2	7.500	33.492	251.192
112	8-282	Տանիքի մետաղական բազրիքի իրականացում h-0.6մ	մ	172.400	1.462	252.028
113	15-614 164-8	Մետաղական ճաղաշարի ներկում	մ2	48.600	1.090	52.989
		<u>Բազվածքներ</u>				
114	Գնաց	Ղռների տեղադրում լամինացված ՄՂՖ-ից կաղնու տեսքով	մ2	101.635	35.779	3636.445
115	Գնաց	Մետաղապլաստե 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ ղռների տեղադրում, կաղնե գույնով	մ2	1.700	46.863	79.667
116	Գնաց	Մետաղապլաստե 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ ղռների տեղադրում, սպիտակ գույնով	մ2	7.600	41.517	315.526
117	Գնաց	մետաղապլաստե ինքնափակվող հակահրդեհային ղռների տեղադրում	մ2	28.800	36.667	1056.010
119	Գնաց	Մետաղապլաստե խուլ ղռների տեղադրում, կաղնե գույնով	մ2	8.200	41.441	339.814
120	Գնաց	Մետաղապլաստե սպիտակ բլոկով 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պատուհանների տեղադրում բացվող	մ2	100.600	33.492	3369.324
121	Գնաց	Մետաղապլաստե սպիտակ բլոկով 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պատուհանների տեղադրում չբացվող	մ2	276.100	25.193	6955.735
122	P 7-84	Պատուհանագոգերի տեղադրում	100 մ2	0.400	83.287	33.315
123	Գնաց	Պատուհանագոգերի տեղադրում 20սմ լայն.	գծմ	168.800	2.438	411.494
124	Գնաց	Պատուհանագոգերի տեղադրում 50սմ լայն.	գծմ	4.000	4.755	19.022
		<u>Ներքին հարդարման աշխատանքներ</u>				

125	8-140	Պատերի կառուցում 20սմ հաստությամբ պ/բլոկներից	մ ³	56.900	19.925	1133.744
126	8-169	Պատերի կառուցում 10սմ հաստությամբ պ/բլոկներից	մ ²	113.900	2.876	327.620
127	6-170	Բարավորների կառուցում R20 դասի բետոնով	մ ³	0.450	72.586	32.664
128	Գնաց	Ամրան Փ18 A500 C	տ	0.100	262.621	26.262
129	Գնաց	Ամրան Փ 8 AC1	տ	0.033	268.912	8.874
130	8-59	Պատերի ամրանավորում	տ	0.500	325.300	162.650
131	15-256 55-5	Պատերի, շեպերի սվաղում ցեմ-ավազե շաղախով	100մ ²	1.300	109.515	142.370
132	15-86 14-1	Պատերի, շեպերի երեսապատում հախճասալերով	100մ ²	1.500	1271.881	1907.821
133	15-246 15-44-5	Պատի սվաղում բարելավված գաջե սվաղով	100մ ²	43.400	198.262	8604.592
134	15-243	Առաստաղի սվաղում բարելավված գաջե սվաղով	100մ ²	23.700	236.932	5615.277
135	14-418	Պատերի ներկում լատեքսաներկով	100մ ²	29.400	135.709	3989.835
136	14-419	Առաստաղի ներկում լատեքսաներկով	100մ ²	32.650	148.076	4834.680
137	P14-372	Պատերի յուղաներկում	100 մ ²	29.000	142.576	4134.718
138	E34-389	Կախովի առաստաղների պատրաստում «Արմատրոնգ» տիպի մետաղական հիմնակմախքով	մ ²	21.300	7.465	159.009
Հատակներ						
139	P5-85 5-86 k=2	Ցեմենտային շաղախից հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	մ ²	2444.400	1.202	2937.174
140	11-197 27-7	Լամինատե հատակների պատրաստում C5կարգի, 10 մմ հաստությամբ	մ ²	2179.870	6.317	13770.012
141	5-43	Շրիշակի իրականացում ՄՂՖ -ից	գծմ	2010.000	0.602	1209.254
142	P5-135 կիրարկ.	Հատակների պատրաստում պրեսգրանիտե սալերից	մ ²	643.100	13.483	8671.105
143	11-208 28-1	Վիմիլային հոմոգեն ծածկույթ	100մ ²	0.926	1143.689	1059.056
144	P5-135	Հատակի երեսպատում խեցե սալերով	մ ²	21.300	9.272	197.502
145	E 11-252 կիրարկ.	Պրեսգրանիտե շրիշակներ h=100մմ	100մ	10.000	130.780	1307.802
146	15-77	Աստիճանահարթակի երեսպատում բազալտե սալիկներով	մ ²	135.000	19.390	2617.650
147	8-282	Աստիճանավանդակներում մետաղական բազրիքի իրականացում	մ	32.000	21.630	692.169
148	15-614 164-8	Աստիճանավանդակների մետաղական ճաղաշարի ներկում	մ ²	15.000	1.090	16.355

149	E1-961	Կիսանկուղային հարկում հողե հատակների քանդում	մ3	76.940	2.151	165.484
150	C310-13 տ.մ.կ.29	Հողի բարձում ավտոմեքենա և տեղափոխում 13կմ	տ	138.490	3.214	445.165
151	E11-6	Խճի շերտի իրականացում 10սմ հաստությամբ	մ3	12.800	6.423	82.219
152	E6-1	B15 դասի բետոնե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ	մ3	12.800	35.297	451.797
153	E11-14	Ռուբեռոիդի շերտ բիտումե մածիկի վրա	մ2	128.240	2.213	283.738
154	E11-55 E11-56	Ց/ավազե հարթեցնող շերտ 50մմ հաստությամբ	մ2	128.240	1.776	227.793
155	E11-69	Ցեմենտե հատակի կառուցում 20մմ հաստությամբ	մ2	128.240	0.978	125.456
		<i>Արտաքին աշխատանքներ</i>				
156	E34-389	Շվաքարանի կողքի երեսպատում ալիկաբնդով	մ ²	9.000	11.156	100.407
157	E15-201	Արտաքին պատերի ց/ավազե սվաղ	մ2	1664.900	1.385	2305.723
158	E8-189	Ինվենտար տախտակամածի տեղադրում և քանդում	մ2	1664.900	0.733	1221.093
159	E8-163	Պատուհանագոգերի և կողամասերի շարվածք ուղղանկյուն կտրվածքի տուֆ քարից	մ3	30.590	21.349	653.077
160	E 15-531 156-6 կիրարկ	Արտաքին պատերի ներկում ֆասադային ներկով ծեփամածկումով	մ2	1810.000	1.407	2546.245
161	11-11	Աստիճանահարթակի հարթեցնող շերտի իրականացում բետոնից 16մ2	մ3	0.100	36.675	3.667
162	15-77	Աստիճանահարթակի երեսպատում բազալտե սալիկներով	մ2	16.000	19.395	310.312
163	23-77 23-229 23-241	Շին աղբի հավաքում և հանում բնակարանից, բարձում ա/ինքնաթափերի վրա	տ	245.000	2.288	560.484
164	310-12	Տեղափոխում 12 կմ հեռ. վրա	տ	245.000	2.297	562.808
		<i>Նկուղային հարկ</i>				
165	զնաց	Ալյումինե ջերմակամրջակով արտաքին էվակուացիոն դռներ	մ2	6.20	65.417	405.585
		Ընդամենը՝				155990.287
		Ներքին ջրամատակարարման ցանց				
1	P17-63	D=25մմ պողպատե խողովակների ապամոնտաժում	զմ	32.000	0.450	14.391
2	16-262	Մետաղապլաստե խողովակների տեղադրում պատերի վրա առանց մեկուսացման d=15մմ փորցարկումով	զմ	9.000	2.060	18.541
3	16-262	Նույնը d=20մմ	զմ	0.000	2.006	0.000

4	16-261	Եռյունը d=25	զմ	0.000	2.584	0.000
5	16-134	Փական d=25մմ	հատ	0.000	3.946	0.000
6	16-134	Փական d=20մմ	հատ	0.000	3.720	0.000
7	16-134	Փական d=15մմ	հատ	24.000	3.493	83.843
8	16-199	Զրաչափ d=20մմ	հատ	1.000	15.951	15.951
9	18-212	Զտիչ d=20մմ	հատ	0.000	3.421	0.000
10	17-53	Լվացարանի ծորակ	հատ	12.000	4.327	51.924
11	Իմֆ. տեղ.	Ձևավոր մասեր	հատ	62.000	8.632	535.156
		Ընդամենը՝				719.807

Ներքին կոյուղու ցանց

1	19-54-B	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Փ100մմ տր.	զմ	0.000	0.845	0.000
2	19-53-B	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Փ50մմ տր.	զմ	0.000	0.834	0.000
3	19-69	Լվացարանի հանում	հ-տ	6.000	0.484	2.904
4	19-70	Ասիական զուգարանակոնքի հանում	հ-տ	0.000	0.599	0.000
5	19-74	հոսակների քանդում	հ-տ	2.000	0.542	1.084
6	16-34 6-2	Կոյուղու պլաստմասե խողովակների տեղադրում պատերի վրա D=100մմ փորձարկումով	զմ	13.000	1.665	21.651
7	16-33 6-1	Կոյուղու պլաստմասե խողովակների տեղադրում պատերի վրա D=50մմ	զմ	0.000	1.085	0.000
8	17-28	Կերամիկական լվացարանի տեղադրում	հատ	12.000	17.085	205.015
9	17-62	Զուգարանակոնք կերամիկական	հատ	12.000	28.768	345.211
10	17-36	Յոսակների տեղադ.	հ-տ	6.000	1.817	10.901
11	Իմֆ. տեղ.	Ձևավոր մասեր	հատ	57.000	8.654	493.289
		Ընդամենը՝				1080.054

Էլեկտրական լուսավորություն

1	ԼԿ8-571-3	ՈՐ11-3068-21 ՄՄ1 4 տիպի բաշխիչ վահանակ	հատ	0.000	140.185	0.000
2	ԼԿ8-612-11	Պլաստմասե վահանակ 12ավտոմատ անջատիչի համար	հատ	4.000	7.441	29.766
